

ՀՀ ԼՈՐՈՒՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2013թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2014թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2013թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Բովանդակություն

	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
	2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	5
1.	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ	7
	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	9
2.	2.1. Կրթություն և մշակույթ	9
	2.2. Առողջապահություն	15
	2.3. Սոցիալական պաշտպանություն	17
	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	20
3.	3.1. Գյուղատնտեսություն	20
	3.2. Բնապահպանություն	24
	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	26
4.	4.1. 2013թ ՀՀ պետական բյուջեով Լոռու մարզում նախատեսված շինարարական աշխատանքները	28
	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	29
5.	5.1. Ճանապարհաշինություն	29
	5.2. Զրամատակարարում ու ջրահեռացում	31
	5.3. Գազամատակարարում	34
	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	35
6.	6.1. Տարածքային կառավարում	35
	6.2. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում	36
	6.3. Քաղաքացիական հասարակություն	38
7.	ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	40
	ՀԱՎԵԼՎԱԾ 1. Տեղեկանք ՀՀ Լոռու մարզի 2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ	48
	ՀԱՎԵԼՎԱԾ 2. Տեղեկանք ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1130-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարման վերաբերյալ	66
	ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀՀ 2013թ. պետ. բյուջեով (Լոռու մարզ) ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների	72

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Լոռու 2010-2013թթ. ՄԶԾ շրջանակում ստեղծված մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից Լոռու մարզային զարգացման ծրագրի 2013թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների և իրականացված աշխատանքների վերլուծության հիման վրա: Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի, հաստատվել է ՀՀ Կառավարության 2009թ հոկտեմբերի 1-ի արտագնա նիստի թիվ 1130-Ն որոշմամբ: ՄԶԾ-ի կազմման ընթացքում մարզպետարանում ձևավորվել են ոլորտային յոթ աշխատանքային խմբեր, որոնք համաձայն Լոռու մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 49 Ա որոշման գործել են հետևյալ ուղղություններով.

- ❖ Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն,
- ❖ Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում,
- ❖ Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր,
- ❖ Առողջապահություն և սոցիալական ապահովություն,
- ❖ Քաղաքաշինություն,
- ❖ Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում),
- ❖ Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն:

ՄԶԾ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- ❖ Մարզի կայուն զարգացում,
- ❖ Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում,
- ❖ Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում,
- ❖ Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- ❖ Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում,
- ❖ Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- ❖ Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- ❖ Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- ❖ Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- ❖ Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում,
- ❖ Մարզպետարանի կարողությունների ուժեղացում,
- ❖ Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- ❖ Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում,
- ❖ Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում,
- ❖ Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում,
- ❖ մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում, տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013թ. փետրվարի 26-ի թիվ 25-Ա հրամանով (հավելված 2) հաստատվել է ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2013թ. Տարեկան աշխատանքային պլանը, որի նպատակն է աջակցել ՄԶԾ-ի իրականացման աշխատանքներին: ՏԱՊ-ի թիրախներն են.

- Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ:
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում:
- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար:
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ, ՏԱՊ-ում ներկայացված են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրված են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու է ՄԶԾ մոնիտորինգի համակարգը:

Այս հաշվետվության մեջ վերլուծված են ՄԶԾ ութ ոլորտներում («Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն», «Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում», «Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր», «Առողջապահություն և սոցիալական ապահովություն», «Քաղաքաշինություն», «Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում)», «Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն», «Արտաքին կապեր և միջազգային կազմակերպություններ») 2013թ. ՏԱՊ-ով նախատեսված և տարվա ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագրությունը ըստ ոլորտների:

Հավելված 1-ում բերված է տեղեկատվություն ՀՀ Լոռու մարզի 2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ

Հավելված 2-ում բերված է տեղեկատվություն ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1130-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարման վերաբերյալ

Հավելված 3-ում բերված է ՀՀ 2013թ. պետ. բյուջեով (Լոռու մարզ) ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների

2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ըստ Լոռու մարզի 2010-2013թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. կարիքների գնահատման՝ անհրաժեշտ գումարը եղել է **9,913,721. 0 հազ.** դրամ, սակայն, ինչպես երևում է ստորև բերված աղյուսակ 1.-ից, 2013 թվականի ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմում է **54,745,462.6** հազար դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **2,167,597.0** հազար դրամ, որից **989.39** հազար դրամ՝ հրատապ ծրագրով, համայնքային ներդրումներ՝ **610,165.6** հազ. դրամ, միջազգային դոնոր և այլ վարկային կազմակերպությունների հատկացումներ՝ **2,136,900.0** հազ. դրամ և մասնավոր հատվածի ներդրումներ՝ **49,830,800.0** հազ. դրամ, որից արդյունաբերության մեջ՝ **49,453,500.0** հազար դրամ:

Աղյուսակ 1.

ՀՀ Լոռու մարզի 2013 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների

Հ/Հ	Ոլորտի անվանումը	2013թ. պլանավորված ֆինանսավորումը, այդ թվում			Իրականացված է 2013թ., այդ թվում		
		Ընդամենը	2013թ. Պետական բյուջեից		Ընդամենը	2013թ. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ	
			Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագրերով		Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագրերով
1.	Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված	49,453.50	0.0	0.0	33,820.00	0.00	0.00
2.	Սոցիալական ոլորտներ	833.6835	806.44	362.30	1,270.144	774.849	394.899
2.1.	Կրթություն	360.3099	341.59	113.60	576.59	296.54	141.54
2.2.	Մշակույթ և սպորտ	232.7436	224.22	164.07	271.56	229.92	160.97
2.3.	Առողջապահություն	235.630	235.63	79.63	417.09	243.49	87.49
2.4.	Սոցիալական ապահովություն	5.0	5.0	5.0	4.90	4.90	4.90
3.	Գյուղատնտեսություն և բնապահպանություն	513.1716	22.00	22,000.0	439.946	51.627	19.986
3.1.	Գյուղատնտեսություն	267.4393	10.00	10.00	194.30	40.81	9.17
3.2.	Բնապահպանություն	245.7323	12,000.0	12,000.0	245.64	10.82	10.82
4.	Քաղաքաշինություն	518.5654	426.26	343.26	1,975.816	415.021	332.021
4.1.	Բնակարանաշինություն	69.60	50.00	0.00	359.05	50.00	0.00
4.2.	Բնակարանային տնտես. և բարեկարգում	448.9654	376.26	343.26	1,616.76	365.02	332.02
5.	Ենթակառուցվածքներ	3,426.5421	912.897	261.83	3,034.056	1,176.391	225.315
5.1.	Ճանապարհաշինություն	456.8205	284.097	142.83	600.61	567.02	125.75
5.2.	Զրամատակարարում	2,764.1871	581.800	72.00	2322.20	564.53	54.73
5.3.	Գազամատակարարում	205.5345	47.000	47.00	111.25	44.84	44.84
	Ընդամենը	54,745.4626	2,167.60	989.39	40,539.96	2,417.89	972.22

Աղյուսակ 1.-ում բերված են նաև 2013 թվականին ՀՀ Լոռու մարզում բոլոր ֆինանսական աղբյուրներով իրականացված աշխատանքների ծավալներն ըստ բնագավառների: Ավյուսակ 2.-ում բերված են ՀՀ Լոռու մարզի 2013 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների: 2013թ. մարզում ընդամենը իրականացվել է **40,539.96** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ **2,417.89** մլն դրամ, համայնքային բյուջեների ներդրումներ՝ **366.26** մլն դրամ, միջազգային դոնոր և այլ վարկային կազմակերպությունների հատկացումներ՝ **1,733.90** մլն դրամ, մասնավոր հատվածի ներդրումներ՝ **35,639.00** մլն դրամ, որից արդյունաբերության մեջ՝ **33,820.0** մլն և ֆինանսավորման այլ աղբյուրներով՝ **382.914** մլն դրամ:

Աղյուսակ 2.

ՀՀ Լոռու մարզի 2013 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների

		մլն դրամ	
Հ/Հ	2013 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների	2013թ. ՏԱՊ-ով նախատեսված ֆինանսավորումը	Իրականացված է 2013թ. ընթացքում
Ընդամենը մարզում, այդ թվում՝		54,745.46	40,539.96
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ, այդ թվում	2,167.60	2,417.89
	❖ ՀՀ քաղաքաշինության նախարարություն	227.99	155.00
	❖ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	73.27	73.27
	❖ ՀՀ մշակույթի նախարարություն	60.15	60.15
	❖ ՀՀ պաշտպանության նախարարություն	83.00	83.00
	❖ ՀՀ առողջապահության նախարարություն	156.00	156.00
	❖ ՀՀ Լոռու մարզպետարան (իրատապ ծրագիր+ լրացուց.)	989.39	1,012.67
	❖ ՀՀ Լոռու մարզպետարան (ճանապ. պահպանում)	68.00	68.00
	❖ Համաֆինանսավորում KFW վարկային ծրագրին	509.80	509.80
	❖ Վանաձորի քաղաքապետարան		300.00
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	610.17	366.26
III	ՄԻՋԱԶԳ. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2,136.90	1,733.90
	❖ Գերմանական KFW բանկ	1,529.40	1,529.40
	❖ «Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկ» վարկային ծրագիր	607.50	204.50
IV	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ	49,453.50	35,639.00
	❖ «ՎԱԼԵՔՍ» ընկերություն	47,400.0	31,900.00
	❖ Սազամար» ՓԲԸ	1,200.0	1,100.00
	❖ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ	353.5	200.0
	❖ «Վանաձոր-Խիմարում» ՓԲԸ	500.0	620.0
	❖ Մասնավոր ներդրումներ (բնակարաններ, օբյեկտներ)		1,500.0
	❖ Մասնավոր ներդրումներ (սոցիալական ծրագրերում)		319.0
V	ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	377.30	382.914
	❖ ՀՀ ԿԱ ԳՏՏԶ ԾԻԳ	127.30	52.80
	❖ ՀՍՆՀ		171.8
	❖ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության»	250.0	150.0
	❖ «Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագիր»		8.0
	❖ «Փարոս» հիմնադրամ		0.314

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2013 թ. ՄԶԾ-ով առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, որ շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

- ✓ ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում,
- ✓ Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգային դրույթների իրականացում,
- ✓ ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի կազմակերպում:

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Ստեփանավանի մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:

ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2012թ. ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ աջակցությունները՝

Ուսուցողական աջակցության ծրագրեր/տարեկան թիրախներ

- ✓ Սկսնակների համար ֆինանսական պլանավորման, դասընթացի կազմակերպում, ուղեկցում, ներառյալ՝ անցյալ տարիների սկսնակները՝ 132
- ✓ Կանանց մրցանակաբաշխության մասնակիցների հավաքագրում 18
- ✓ Վարկավորման գործընթացի, շրջանառության հարկի սեմինար 22

Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրեր/տարեկան թիրախներ

- ✓ Փոփոխությունների նոր փաթեթի վերաբերյալ տեղեկացնող/պարզաբանող ամփոփ նյութի տարածում /2 ամսվա ընթացքում առնվազն 500 ՓՄՁ սուբյեկտի/ 554

Տեղեկատվական աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին, այդ թվում՝

- ✓ Գործարարներին պարբերաբար անհատական կամ խմբային խորհրդատվություն
- ✓ Էլեկտրոնային ստորագրությունների ձեռքբերման, եկամտային հարկի մասին օրենքին համապատասխան աշխատավարձի վերահաշվարկման, անհատական հաշիվների գրանցման, եկամտային հարկի հաշվետվությունների կազմման և էլեկտրոնային եղանակով դրանց ներկայացման ուղղությամբ 360
- ✓ Իրավաօրենսդրական դաշտում կատարված այլ փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն 440
- ✓ ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածում՝ 465

Միջազգային համագործակցության ծրագրեր/տարեկան թիրախներ

- ✓ Արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտների ոլորտային շտեմարանի համալրում, աշխատանքներ «MarketPlace» կայքի հետ՝ 24

- ✓ ՁեՑ-ի ամսական էլ. տեղեկաթերթերի և այլ տեղեկատվական բնույթի նյութերի տարածում գործարարների շրջանում՝ 350
- ✓ Տեղեկատվության տրամադրում ԵՄ շուկայի պահանջների, օրենսդրության, արտահանման/ներմուծման ընթացակարգերի, արտադրողների, սարքավորումների, ապրանքների գների և այլ նմանատիպ հարցերի վերաբերյալ՝ համաձայն ՓՄՁ սուբյեկտների կողմից կատարված հարցումների՝ 24
- ✓ Գործարար/տեխնոլոգիական համագործակցության հիմնապաշարի (ԳՀՀ/ՏՀՀ) համալրում Հայաստանյան ՓՄՁ-ների կողմից գործարար համագործակցության առաջարկներով՝ 10
- ✓ ՁեՑ-ի համապատասխան գործիքների միջոցով հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների պահանջին համապատասխան գործընկերների որոնում և գործարար կապերի ստեղծմանն աջակցություն՝ 7

Տեղական տնտեսական զարգացում/տարեկան թիրախներ

- ✓ Համայնքների տնտեսական ներուժի բացահայտում - 2
- ✓ Համայնքների տնտեսական քարտեզագրում - 12
- ✓ Գյուղտեխնիկայի տրամադրում՝ - 6 հոգու տրակտոր եւ 9 հոգու սարքավորումներ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության առաջատար բնագավառի՝ արդյունաբերության մասով 2010-2013թթ. Լոռու մարզի ՄՁԾ-ով կարիքի գնահատում չի կատարվել, քանի որ այս բնագավառում ներդրումների բացարձակ մեծամասնությունն ընկնում է մասնավոր հատվածի վրա, իսկ 2009 թվականին՝ ՄՁԾ-ի կազմման ժամանակ համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէր գոնե մոտավոր կանխատեսել ճյուղի զարգացման հիմնական ուղղությունները, ներդրումների չափերը:

Չնայած դրան, 2013 թվականի համար մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից իրատեսական է համարվել պլանավորվել շուրջ **49,453.50** մլն դրամի ներդրումներ, մասնավորապես.

❖ Հանքարդյունաբերություն	48,953.50 մլն դրամ
✓ «ԷՅ-ՍԻ- ՓԻ» ՓԲԸ	400. 00 մլն դրամ
✓ «Թեղուտ» ՓԲԸ	47,000.00 մլն դրամ
✓ «Սագամար» ՓԲԸ	1,200.00 մլն դրամ
✓ «Ախթալայի ԼՀԿ», ՓԲԸ	353.50 մլն դրամ
❖ քիմիական արդյունաբերությունում	500.00 մլն դրամ
✓ «Վանաձոր-Խիմարում» ՓԲԸ	500. 00 մլն դրամ

Մարզի արդյունաբերության և մասնավոր հատվածում ներդրումների գերակշիռ մասը հանքարդյունաբերության ճյուղում է:

2013 թվականին, ըստ մարզի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններից ստացված տեղեկատվության, մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից նախատեսված **49,453.50** մլն դրամի դիմաց իրականացվել է ընդամենը **32,820.00** մլն դրամի ներդրումներ, մասնավորապես.

➤ «Վալլեքս» ընկերությունների խումբ («Թեղուտ», «Էյ-ՍԻ-ՓԻ» ՓԲԸ-ների)	31,900.00 մլն դրամ
➤ «Սագամար» ՓԲԸ՝	1.100.00 մլն դրամ
➤ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ՝	200.00 մլն դրամ
➤ «Վանաձոր-Քիմարում» ՓԲԸ՝	620.00 մլն դրամ

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2.1. Կրթություն և մշակույթ

Համաձայն Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի 2013թ. տարեկան աշխատանքային պլանի մարզի կրթության ոլորտում շարունակվել է Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական քաղաքականության իրականացումը:

Որպես ոլորտի զարգացման գերակա նպատակ՝ շարունակվել է դիտվել կրթության որակի և մատչելիության բարձրացումը: 2013թ. ՏԱՊ-ի համաձայն շարունակվել են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների ուժեղացմանն ուղղված աշխատանքները, այդ թվում՝

- Կրթադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեությունը բարելավելու նպատակով ուսումնասիրություններ են կատարվել մարզի թվով 15 դպրոցներում (Վանաձորի թթ.1 և 25, Վահագնիի, Սպիտակի թ6, Գեղասարի, Ստեփանավանի թթ.2 և 6, Ուրասարի, Սվերդլովի, Լեոնապատի, Ալավերդու թթ.4 և 7, Օձունիթ2, Կարմիր Աղեգու և Ծաթերի), ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:
- Նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ են տարվել միասնական քննություններին մասնակցող 1112 շրջանավարտների համար, իրականացվել է մարզի դպրոցների ավարտական քննությունները և գիտելիքների ստուգումը պատշաճ մակարդակով կազմակերպելու, անցկացնելու և ընթացքը վերահսկելու ծրագիրը՝ հաստատված Լոռու մարզպետի կողմից:
- Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 151 հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների և այլ հարցերում: Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը կատարվել են փոփոխություններ թվով 37 հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների կազմերում:
- Կրթության առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակում ներառական կրթություն է իրականացվել Վանաձորի թիվ 18 դպրոցում (33 երեխա), Ստեփանավանի թիվ 1 դպրոցում (34 երեխա), Ստեփանավանի թիվ 6 դպրոցում (50 երեխա), Ստեփանավանի թիվ 2 դպրոցում (29 երեխա/), Ախթալայի թիվ 1 դպրոցում (5 երեխա): 2014 թ հունվար ամսից ներառական կրթություն կիրականացնեն նաև Վանաձորի թիվ 6 , թիվ 25 և Կուրթանի դպրոցները:
- Ընթացիկ տարում ամրացման աշխատանքներ են իրականացվել Հաղպատի դպրոցին ամրացված շենքում, ամրացվել է Մարցի դպրոցի նախկին մասնաշենքը, կառուցվելու է նաև նոր մասնաշենք: Նորոգման աշխատանքներ են իրականացվել Ահնիձորի, Միխայլովկայի, Վանաձորի թիվ 6, Լուսաղբյուրի և Արջուտի դպրոցներում: Լոկալ ջրոցման համակարգեր է մոնտաժվել Լեոնավանի, Սարչապետի, Ծաղկաբերի և Լուսաղբյուրի դպրոցներում:
- Տնօրենների կողմից սահմանված կարգով և պարբերականությամբ տեղեկատվություն է ներկայացվել գույքագրման, շենք-շինությունների ֆիզիկական վիճակի մասին: Ստացված տեղեկատվությունը մասնագիտական վերլուծության է ենթարկվել, որը հիմք է ծառայել հիմնանորոգման, արդիականացման ծրագրերի մշակման համար:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. կրթության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **1,192,180.0** հազ. դրամ, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **360,309.9** հազ. դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **341,590.0** հազ. դրամը պետ. բյուջեով, որից **113,600.0** հազ. դրամը՝ հրատապ աշխատանքների կատարման պլանով:

Մարզի կրթության ոլորտում 2013թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **360.31** մլն դրամի դիմաց իրականացվել է **576.59** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից նախատեսված **341.59** մլն դրամի դիմաց՝ **296.537** մլն դրամի աշխատանքներ, որից **141.537** մլն դրամի՝ հրատապ ծրագրերով: Համայնքային բյուջեով կատարվել է **0.853** մլն դրամի աշխատանքներ, իսկ ֆինանսավորման այլ աղբյուրներով՝ **279.20** մլն դրամի:

Կրթության ոլորտում 2013թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների բերված են Աղյուսակ 2.1.1.-ում:

Կրթության ոլորտում 2013թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.1.1.

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2013թ. ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 01.01.14թ.	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	360.310	576.590	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	341.590	296.537	
	ՀՀ Քաղաքաշինության նախարարություն		332.00	
1.	Ալավերդու արհեստագործական ուսումնարանի հիմնանորոգում	72.99	0.0	ՀՀ Քաղաքաշինության նախարարություն
2.	Մարցի դպրոցի կառուցում	155.0	155.0	
	ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրերով)	113.600	141.537	4-րդ հրատապ ծրագիր
1.	Լեռնավան համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	7.00	6.16	
2.	Ալավերդի համայնքի թիվ 8 դպրոցի մարզադահլիճի նորոգում	15.73	19.73	
3.	Արջուտ համայնքի դպրոցի պատուհանների փոխում	2.87	2.57	
4.	Սարչապետ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	6.00	5.81	
5.	Կաթնաջուր համայնքի մանկապարտեզի կառուցում	33.00	32.86	
6.	Լուսաղբյուր համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	14.00	10.93	
7.	Ծաղկաբեր համայնքի դպրոցի գազաֆիկացում	5.00	4.71	
8.	Աինիձոր համայնքի դպրոցի վերանորոգում	10.00	10.00	
9.	Միխայլովկա համայնքի դպրոցի վերանորոգում	20.00	21.27	

10.	Ագարակ համայնքի մանկապարտեզի ցանկապատի կառուցում		4.40	4-րդ հրատապ ծրագիր (ՏԱԴ-ին լրացուցիչ)
11.	Գարգառ համայնքի մանկապարտեզի կառուցում/Լրաց/		0.56	
12.	Լուսաղբյուր համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում		11.07	
13.	Վանաձոր համայնքի թիվ 6 դպրոցի վերանորոգում		11.47	
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	18.7199	0.853	
1.	Եղեգնուտ համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում	0.81	0.00	
2.	Գարգառ համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում	1.11	0.60	
3.	Մեծ Այրում համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում	0.30	0.00	
4.	Մեծավան համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում	10.50	0.253	
5.	Ծաղկաբեր համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում	1.00	0.00	
6.	Կաթնաջուր համայնքի մանկապարտեզի շենքի ձեռքբերում	5.00	0.00	
III	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ		279.00	
1.	Հաղպատի դպրոցի ուժեղացում, վերակառուցում		92.20	
2.	Տաշիրում մանկապարտեզի կառուցում		120.00	
3.	Ստեփանավանում մանկապարտեզի կառուցում		25.00	
4.	Ալավերդի համայնքի գեղարվեստի դպրոցի հիմնանորոգում		36.00	

Մշակույթ

2013թ. ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում են նաև մշակութային օջախների վերանորոգման և մշակութային միջոցառումների իրականացման աշխատանքները:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. մշակույթի և սպորտի ոլորտների համար պահանջվող գումարը եղել է **265,000.0** հազ. դրամ, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **232,743.6** հազ. դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **224,220.0** հազ. դրամը պետ. բյուջեով, որից **164,070.0** հազ. դրամը՝ հրատապ աշխատանքների կատարման պլանով:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. մշակույթի և սպորտի ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **265.00** մլն դրամ: Մարզի մշակույթի և սպորտի ոլորտում 2013թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **232.74** մլն դրամի դիմաց 2013թ.իրականացվել է **271.562** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝ պետ. բյուջեով նախատեսված **224.22** (164.07 հրատապ ծրագրով) մլն դրամի դիմաց իրականացվել է **229.92** մլն դրամի (**160.97** մլն դրամի՝ հրատապ ծրագրով), համայնքային բյուջեներով՝ **3.642** մլն դրամի և մասնավոր ներդրողների միջոցներով՝ **38.0** մլն դրամի աշխատանքներ:

Լոռու մարզի մշակույթի ոլորտում 2013թ. իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները.

- Հիմնանորոգման աշխատանքներ են տարվել Քոբայրավանքում, Սանահինի վանքում, Օձունի վանքում և «Լոռի Բերդ» ամրոցում:
- Համայնքային կենտրոնի շենք է կառուցվել Հազվի համայնքում, վերանորոգվել են Կարմիր Աղեգի, Դեբեդի և Ձյունաշող համայնքների համայնքային կենտրոնների շենքերը, Սարամեջի և Ղուրսալիի համայնքային կենտրոններում կառուցվել է ջեռուցման համակարգեր:

- Մշակույթի տների, հանդիսությունների սրահների, երաժշտական դպրոցների, ակումբների և մշակութային կոթողների վերանորոգման, կառուցապատման կամ տարածքների բարեկարգման աշխատանքներ են տարվել մարզի ավելի քան 20 համայնքներում:

Աղյուսակ 2.1.2 –ում բերված են մշակույթի և սպորտի ոլորտներում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների:

Մշակույթի և սպորտի ոլորտներում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.1.2

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2013թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.01.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	232.744	271.562	160.970	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	224.22	229.92	160.97	
	ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	60.15	60.15		
1	Քոբայրավանքի հիմնանորոգում	17.95	17.95		
2	Սանահինի վանքի հիմնանորոգում	22.50	22.50		
3	«Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգում	19.70	19.70		
	ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	164.07	169.77	160.97	
1	Կարմիր Աղեգ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում	2.07	1.79	1.79	
2	Հազվու համայնքի համայնքային կենտրոնի կառուցում	35.00	29.99	29.99	
3	Աինիձոր համայնքի հանդիսությունների սրահի կառուցում	12.00	6.80		
4	Գոգարան համայնքի միջոցառումների սրահի կառուցում	30.00	28.33	28.33	
5	Դաշտաղեմ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում	15.00			
6	Ձյունաշող համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում	15.00	14.19	14.19	
7	Հաղպատ համայնքի մշակույթի տան վերանորոգում	40.00	53.33	53.33	
8	Աջակցություն մշակութային համույթներին (սուրվենցիա)	15.00	15.00	15.00	
9	Հակահրդեհային վահանակների տեղադրում (Գեղասար, Սարամեջ, Ղուրսալի, Սարահարթ, Լեռնահովիտ, Բազում համայնքային կենտրոններ, Հաղպատի մշակույթի տուն)	0.00	3.49	3.49	
10	Սարամեջում համայնքային կենտրոնի ջեռուցման համակարգի կառուցում	0.00	2.55	2.55	
11	Ղուրսալի համայնքի համայնքային կենտրոնի ջեռուցման համակարգի կառուցում	0.00	2.41	2.41	

12	Պրիվոլնոյե համայնքի մշակույթի տան վերանորոգում		6.53	6.53	
13	Լեջան համայնքի միջոցառումների սրահի վերանորոգում		3.36	3.36	
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	8.5236	3.6416	0.00	
1	Գուգարքի մարզադպրոցի շենքի մասնակի նորոգում	1.00	0.00		
2	Գյուլագարակի համայնքային կենտրոնի կահավորում	0.43	0.43		
3	Լոռի Բերդ համայնքի մշակույթի տան մասնակի նորոգում	0.59	0.00		
4	Կուրթանի հուշարձանների և մշակութային կոթողների նորոգում, տարածքի բարեկարգում	0.50	0.00		
5	Հազվու հուշարձանների և մշակութային կոթողների նորոգում, տարածքի բարեկարգում	0.20	0.00		
6	Չկալովի ակումբի մասնակի նորոգում	0.10	0.00		
7	Լեռնահովիտ համայնքի մշակույթի տան կահավորում, գույքի ձեռքբերում	1.00	0.00		
8	Ձորամուտի ակումբի մասնակի նորոգում	0.20	0.29		
9	Միխայելովկայի ակումբի կահավորում, հուշարձանների ու մշակութային կոթողների տարածքի բարեկարգում	0.30	0.08		
10	Նորաշենի մշակույթի տան նորոգում, հուշարձանների ու մշակութային կոթողների տարածքի բարեկարգում	2.00	2.00		
11	Ծաղկաբեր համայնքի հուշարձանների ու մշակութային կոթողների տարածքի բարեկարգում	1.20	0.00		
12	Կաթնաջուր համայնքի մշակույթի տան կահավորում	1.00	0.84		
III	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ	0.00	38.00		
1	Դեբեդի համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում		28,00		
2	Ծաթեր համայնքի հանդիսությունների սրահի կառուցում		10,00		

Լոռու մարզի մշակույթի ոլորտում 2013թ.-ին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ✓ Բարձր մակարդակով կազմակերպվել և անց են կացվել Ամանորին և Սուրբ Ծննդին, Հայոց բանակի կազմավորման 21-րդ տարելիցին, Կանանց միջազգային տոնին, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, ՀՀ Անկախության 22-ամյա հոբելյանին, Անտոն Քոչինյանի ծննդյան 100 ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցել են մանկավարժներ, արվեստագետներ, Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան գոյամարտին մասնակցած վետերաններ, մտավորականներ:
- ✓ Կազմակերպվել են «Կոմիտասի կյանքը եւ գործը», «Արամ Խաչատրյան 110» մուլտիմեդիա էլեկտրոնային հանրագիտարան ձայնասկավառակների շնորհանդեսները:

- ✓ Կազմակերպվել են միջոցառումներ, նվիրված ՀՀ Սահմանադրության 16-ամյակին, «Լոռի-Արցախ» մշակութային օրերը: Կազմակերպվել և անց է կացվել մի շարք փառատոներ, այդ թվում՝ «Art Expo» միջհամայնքային 2-րդ մշակութային մրցույթ-փառատոնը, համերգներ, ներկայացումներ եւ ցուցահանդեսներ, որտեղ իրենց ակտիվ մասնակցություն են ցուցաբերել մարզի տարբեր շրջաններից հրավիրված երաժշտական և արվեստի դպրոցների շնորհալի պատանի կատարողները, «Երգը բարեկամության կամուրջ է» խորագրով Ռուսական երգի հանրապետական երկրորդ եւ Բելոռուսում կայացած Սլավյանսկի բազար» երգի մանկապատանեկան մրցույթ-փառատոններին մարզից մասնակցել է 1 երեխա, արժանանալով դափնեկրի կոչման:
- ✓ 2013թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով մշակույթի նախարարության կողմից իրականացվող մարզի մշակութային-պատմական և հոգևոր կոթողների՝ Քոբայրավանքի, Սանահինի վանքային համալիրի և «Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկային ընթացքում են, իսկ Օձուն համայնքի վանքի վերականգնողական աշխատանքները շարունակվում են:

Լոռու մարզի սպորտի ոլորտում 2013թ. իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել «Լոռվա ձմեռ-2013» 43-րդ ավանդական մարզատոնահանդեսը: Համաձայն միջոցառման ծրագրի, Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել տարբեր մարզաձևերից և ազգային խաղերից մրցաշարեր, որոնց հաղթողները պարգևատրվել են պատվոգրերով և նվերներով:
- Վանաձորում անցկացվել է ավանդական դարձած «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ» մրցաշարը՝ ֆուտբոլ, սեղանի թենիս, վոլեյբոլ մարզաձևերից, որին մասնակցել են տարածաշրջաններում վերոնշյալ մարզաձևերից հաղթած թիմերը, ինչպես նաև Վանաձորից 2-ական թիմ ամեն մարզաձևից: Բոլոր մարզաձևերում հաղթողներն ու մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը պարգևատրվել են մարզպետի պատվոգրով, մարզպետի գավաթով, մեդալներով, դրամական պարգևներով:
- ՀՀ անկախության 22-րդ տարելիցին նվիրված ամենամյա դպրոցականների մարզական խաղերի հանրապետական եզրափակիչ փուլի մրցումները, որին մասնակցեցին Լոռու մարզի հավաքական թիմերը: Մեր մարզը ներկայացնող թիմերը գրավեցին 5 առաջին /թեթև աթլետիկա տղաներ, թեթև աթլետիկա աղջիկներ, սեղանի թենիս աղջիկներ, ձեռքի գնդակ աղջիկներ ձեռքի գնդակ տղաներ / և 3 երկրորդ տեղ /սեղանի թենիս տղաներ, ֆուտբոլ, վոլեյբոլ տղաներ/:
- Լոռու մարզի քաղաքային համայնքներում կազմակերպվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի առաջին (համայնքային) և երկրորդ՝ մարզային փուլերը եւ ՀՀ «Ազգային Ժողովի Գավաթ» մրցումների ներդպրոցական, տարածաշրջանային, մարզային փուլերը:
- ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, Վանաձորի քաղաքապետարանի, Լոռու մարզպետարանի և անձամբ մարզիկի ջանքերով կայացավ ըմբշամարտի միջազգային մրցաշար Վանաձորում, նվիրված օլիմպիական փոխչեմպիոն Ստեփան Սարգսյանի անվան, որին մասնակցեցին Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Ղրղզստանի, Ղազախստանի, ԱՄՆ-ի Իրանի ուժեղագույն ըմբիշները: Հաղթողները և մրցանակակիրները պարգևատրվում են խոշոր դրամական պարգևներով:

2.2. Առողջապահություն

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. առողջապահության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **310.0 մլն** դրամ, փաստացի պլանավորվել է կատարել **235.63 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **235.63 մլն** դրամը պետ. բյուջեով, որից 79.63 մլն դրամը՝ հրատապ աշխատանքներով:

2013 թվականին մարզի առողջապահության ոլորտում ֆինանսական բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է **417.092 մլն** դրամի կապիտալ ներդրում, որից **243.492 մլն** դրամը՝ պետ.բյուջեի միջոցներով (**87.492 մլն** դրամը՝ հրատապ IV ծրագրով), **173.60 մլն** դրամը՝ մասնավոր ներդրողների և հիմնադրամների միջոցներով:

Առողջապահության ոլորտում 2013թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.2.1

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2013թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.01.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	235.630	250.492	87.492	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	235.630	212.492	87.492	
1	Ալավերդու բժշկական կենտրոնի հիմնանորոգում	156.000	156.000		
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	79.630	87.492	87.492	
1	Վանաձոր համայնքի ինֆեկցիոն հիվանդանոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում	13.00	5.63	5.63	
2	Գուգարք համայնքի ամբուլատորիայի կառուցում	24.00	25.26	25.26	
3	Վանաձոր համայնքի թիվ 5 համաքուժարանի վերանորոգում	1.13	1.51	1.51	
4	Սպիտակ համայնքի «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վերանորոգում	31.50	32.45	32.45	
5	Ալավերդի համայնքի տուբերկուլյոզային դիսպանսերի տանիքի վերանորոգում	7.00	6.60	6.60	
6	Ծաղկաբեր համայնքի ԲՄԿ-ի վերանորոգում	3.00	3.00	3.00	
7	«Մեծավանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի ջեռուցման համակարգի կառուցում		2.52	2.52	
8	Վանաձոր համայնքի թիվ 4 պոլիկլինիկայի վերանորոգում		8.62	8.62	
9	Վանաձոր համայնքի թիվ 2 պոլիկլինիկայի վերանորոգում		1.90	1.90	
	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ		173.600	0.000	
1	Ալավերդու հիվանդանոցի դիախերձարանի կառուցում		45.60		ՀԱՆՀ
2	Շահումյան համայնքի ամբուլատորիայի վերակառուցում		28.00		ՀԱՆՀ
3	Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցում		100.00		

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ են. համարվում բուժօժանությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժօգնությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

2013թ. առողջապահության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Հիմնանորոգվել է «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքը, և հակատուբերկուլյոզային բաժանմունքի տանիքը:
- Ավարտվել է «Գուգարքի ԱԱԴԿ» ՓԲԸ-ի շենքի կառուցման աշխատանքները:
- Ընթացքի մեջ են Վանաձորի բժշկական կենտրոնի և «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դիահերձարանի և կառուցման աշխատանքները:
- Վերանորոգվել են Վանաձորի թիվ 2, թիվ 4, թիվ 5 և Շահումյանի համաբուժարանների, «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և Ծաղկաբերի ԲՄԿ-ի շենքերը:
- Կառուցվել է Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոցի և «Մեծավանի առողջության կենտրոն» ՊԲԸ-ի լոկալ ջեռուցման համակարգերը:

2013թ. մարզի առողջապահության ոլորտում իրականացվել են նաև հետևյալ միջոցառումները՝

- Ապահովվել է սերտ համագործակցություն մարզում առողջապահական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների («Հիպոկրատ» հունական հիմնադրամ, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպություն, Ֆրանսահայ բժիշկների միություն, «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամ, ԱՄՆ ՄԶԳ-ի Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱԴԲ) ծրագրեր, «Ամբոր» և այլն) հետ:
- «Գեդեոն Ռիխտեր», «Լե լաբոլատուադ Սերվիե», «Դենկ Ֆարմա» և «Ալպեն Ֆարմա Գրուպ» դեղագործական ֆիրմաները մարզում կազմակերպել են սեմինարներ, որոնց մասնակցել են մարզի գրեթե բոլոր մասնագիտությամբ բժիշկներ:
- Ցուցաբերվել է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն Լոռու մարզ գործուղված, ինչպես նաև ոչ տեղաբնակ նոր նշանակված բժիշկ-մասնագետների բնակարանային կարիքները լուծելու հարցում («Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում աշխատանքի է ընդունվել 1 սիրիահայ բժիշկ, ՀՀ ԱՆ կողմից գործուղվել են ևս 5 բժիշկներ):
- Մասնագիտացված բուժօգնությունը բնակչությանը հասանելի դարձնելու նպատակով Երևանի բժշկական կազմակերպությունների բժիշկ մասնագետներից կազմված խմբեր են գործուղվել մարզի բժշկական կազմակերպություններ: «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից հուլիս-սեպտեմբեր ամիսներին մարզի բնակչությանը ըստ տարածաշրջանների ցուցաբերվել է անվճար ակնաբուժական զննություններ, սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց կատարվել են (ցուցումների դեպքում) 471 վիրահատություններ, որից 145-ը լազերային բուժում: Մարզպետի կողմից տրամադրվել է 28 միջնորդագիր սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված անձանց վիրահատություն կատարելու համար:
- ՀՀ Լոռու մարզպետի կարգադրությամբ երեխայի առողջության և ծննդօգնության պետական հավաստագրերի ներդրման գործընթացի հսկողության և մոնիտորինգի իրականացման նպատակով ստեղծվել է մոնիտորինգային խումբ, որը պարբերաբար կատարել է մոնիտորինգ

մարզի բոլոր առողջապահական ընկերություններում՝ իր կազմի մեջ ընդգրկելով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

- Շարունակական բնույթ է կրել բժշկական անձնակազմի վերապատրաստման գործընթացը: Մարզից վերապատրաստում են անցել Մոսկվայում՝ 1 և Սանկտ Պետերբուրգում՝ 1 անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգներ: Տուբերկուլոզի ազգային ծրագրի շրջանակներում տարբեր թեմաներով վերապատրաստվել են բժիշկներ և բուժքույրեր: ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի կողմից «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային համաձայնագրով ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում և Ծաղկաձորում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին 2013թ. Լոռու մարզից մասնակցել են 19 բժիշկներ և 4 բուժքույրեր:
- Մի շարք առողջապահական ընկերություններ բացել են ինտերնետային կայք-էջեր, որտեղ արտացոլված են ընկերությունների ողջ գործունեությունն ու աշխատանքի ծավալը:
- ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ վարչությունը իրականացրել է նաև հատուկ (առանձին) և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2013թ. «Ջերմուկ», «Արզնի», «Գանձաղբյուր» առողջարաններ են ուղեգրվել թվով քաղաքացիներ, համապատասխանաբար՝ 11, 15, և 30, «Արարատ» մոր և մանկան առողջարան՝ մինչև 18 տարեկան 3 երեխա:

2.3. Սոցիալական պաշտպանություն

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. Սոցիալական պաշտպանության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **677.461** մլն դրամ 2013թ. Փաստացի պլանավորվել է **5.00** մլն դրամի ներդրում, ամբողջությամբ ՀՀ պետբյուջեից, որն էլ իրականացվել է 1-ին կիսամյակում (4.9 մլն դրամով Ղուրսալի համայնքում փախստական ընտանիքի համար բնակարանի ձեռքբերում):

2013թ. ՄԶԾ-ում որպես ոլորտային նպատակ նախանշվել է բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը Լոռու մարզում, որին նպատակաուղղվել են յոթ ծրագրային ուղղություններով առաջարկված թվով 10 ծրագրերը, որոնց իրականացմամբ կբարելավվի հանրային իրազեկման մակարդակը, սոցիալական ծրագրերի իրականացումը և սոցիալական ծառայությունների կառավարումը, կընդլայնվեն բնակչության խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունները, մասնավորապես՝ տարեցների և հաշմանդամների շրջանում: Համագործակցության արդյունքում ենթադրվում է, որ կբարելավվի սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական բազան, շարունակաբար կընթանա սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի վերապատրաստման գործընթացը, որի ընթացքում կզարգացվեն ոլորտում զբաղվածների կարողությունները:

Ծրագրերի իրականացման ուղղությամբ 2013թ. կատարվել են հետևյալ աշխատանքները.

- **Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում** ծրագրի շրջանակներում ծրագրի շրջանակներում մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, ՏԻՄ, ոչ պետական) սոցիալական աշխատանք կատարող կադրերի վերապատրաստում՝
 - ✓ ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման փորձնական ծրագրի շրջանակում UNICEF-ի և Համայնքների ֆինանսիստների միության կողմից կազմակերպված

կարիքների գնահատման և հմտությունների զարգացման վերաբերյալ 2 դասընթացներին մասնակցել են 25 աշխատակիցներ (ՄՏՏՏ-ների, մարզպետարանի, կրթության բնագավառի և ՀԿ-ների ներկայացուցիչներ):

- ✓ Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին նվիրված դասընթացին մասնակցություն են ունեցել 3 ներկայացուցիչ՝ մարզպետարանից, «Լիարժեք կյանք» և «Լուսաստղ» ՀԿ-ներից:

- **Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում** (ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը). միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ իրականացվել են սոցիալական ավելի քան 20 ծրագիր, այդ թվում՝ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվում են՝ «Վանաձորի նոր կառուցվող բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի կառուցում», «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում», «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից՝ «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում, «Կամրջակ» սոցիալ-ԲՀԿ-ի կողմից իրականացվող «ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքում ջրագծի կառուցում, «Երևանի ռոտարի ակումբ» ՀԿ-ի կողմից իրականացվող Լոռու մարզի «Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 օժանդակ դպրոց» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի տեղադրում եւ այլն:
- Մարզի որոշ համայնքներ դրամական օգնություն են տրամադրել մի շարք ՀԿ-ների կամ կոնկրետ շահառուներին (Վետերանների խորհուրդ, Խուլերի կազմակերպություն և այլն):
- Լոռու մարզպետարանի կողմից դրամական աջակցություն է ցուցաբերվել առանձին քաղաքացիների կամ կազմակերպությունների: Անհայտ կորած զինծառայողների 14 ընտանիքների տրամադրվել է 20.000-ական դրամ աջակցություն, Վանաձորի տարեցների տանը՝ 100.000 դրամ, Հույսի տանը՝ 50.000 դրամ, 2 տարեց անձանց (տարեցների միջազգային օրը)՝ 40.000-ական դրամ, ինչպես նաև տարբեր չափի դրամական աջակցություն տարաբնույթ մշակութային միջոցառումների անցկացման համար:
- **Կամավորների շարժման (կենտրոնի) զարգացում, երիտասարդության շրջանում կամավորական շարժման խթանում.** ՀԿ-ների տարբեր ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը՝ 81 («Առավոտ» ՀԿ՝ 25, «Հայկական Կարիտաս»՝ 14 (Վանաձոր՝ 10, Տաշիր՝ 4), «Լիարժեք կյանք»՝ 42), որոնցից վերապատրաստվել են 33-ը:
- **«Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում՝ Սոցիալական համալիրների (սոցիալական ծառայություն, զբաղվածության և կենսաթոշակային տարածքային կենտրոններ, ԲՍՓՀ) կառուցում» ծրագիր:** Ծրագրի իրականացումը ներկայումս ընթանում է պետական մակարդակով՝ առաջնահերթ աշխատանքներ են տարվում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մեկտեղման (նույն տարածքում) կամ ինտեգրման ուղղությամբ: Գուգարքի տարածաշրջանային կենտրոն հանդիսացող Վանաձոր քաղաքի Գ.Նժդեհի փող. թիվ 14 հասցեում 2005թ.-ից գործում է Սոցիալական համալիր կենտրոնը (որպես հանրապետությունում փորձնական առաջին ծրագրի արդյունք): Դեռևս հարմար տարածքներ չեն գտնվել Ստեփանավան, Սպիտակ քաղաքներում, իսկ Ալավերդիում և Տաշիրում առաջարկվել են վերապրոֆիլավորվող տարածքներ:
- **Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական, ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և համացանցային կապով ապահովում.** Մարզպետարանի աշխատակազմի թվով 4 սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները (Սպիտակ, Ստեփանավան, Թումանյան, Տաշիր) աշխատում են

կայուն համացանցային կապով ինչպես մարզպետարանի, այնպես էլ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև:

- **Լոռու մարզում տարեցների և հաշմանդամների վիճակի բարելավում ծրագրի շրջանակներում.** «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Վանաձորում իրականացվող «Տնային խնամք միայնակ տարեցներին» ծրագրին աջակցությունը ընթացել է ընտանեկան նպաստ համակարգում չընդգրկված հրատապ օգնության տրամադրման (սոցիալական աջակցության խորհուրդների) միջոցով: Շահառուների ցուցակները յուրաքանչյուր եռամսյակ տրամադրվում է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Վանաձորի գրասենյակի կողմից:
 - ✓ ՀԿ-ներում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների (սոցաշխատող, խնամող և բուժքույր) թիվը՝ 33 («Լիարժեք կյանք» ԲՀԿ՝ 20 «Հայկական Կարիտաս»՝ 13)
 - ✓ Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում՝ մարդասիրական ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը՝ 353 («Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի միջոցներով՝ Վանաձոր՝ 140, Ալավերդի՝ 108, Սպիտակ՝ 105, Տաշիրում ծրագիրը փակվել է):
 - ✓ Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում (բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող) ծերերի թիվը՝ 160 («Հայկական Կարիտասը» սպասարկում է Վանաձորում 100 և Տաշիրում՝ 60 տարեցների):
- **Հաշմանդամություն ունեցող անձանց** (հատկապես՝ հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների) ապահովում վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով: 2013թ. հաշմանդամություն ունեցող անձանց համար լրացվել է 146 ՎԱԾ (վերականգնողական անհատական ծրագրեր), որից 26 սայլակ, 25 այլ պարագաներ (օրթոպեդիկ կոշիկ, գուլպա), 8 ձեռնափայտ, 13 հենակ, 7 քայլակ, 19 լսողական սարք, պրոթեզավորում՝ 41 անձ, որոնցից 16-ը՝ կրծքի, ձայնաստեղծ սարք՝ 8: Վանաձորի ՍԾՏԲ-ի կողմից բաշխվել է 32 լսողական սարք: Իսկ «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց բաշխվել է 18 լսողական սարք, 19 հենակ և 17 քայլակ:
- **«Ստեփանավանի հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման համայնքային կենտրոն»-ի զարգացում.** Հաշմանդամություն ունեցող երեխաների առողջավերականգնողական ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվել են 60 երեխաներ, որից՝ 15 հաշմանդամություն ունեցող:
- **Աջակցություն զբաղվածության քաղաքականությանը.** Զբաղվածության բնագավառում ՀՀ կառավարությունը շարունակել է իր քաղաքականությունը և պետական ծրագրերի մասով հատկացումները:
 - ✓ Մասնագիտական ուսուցում անցած գործազուրկների թիվը՝ 109 մարդ (Վանաձոր՝ 51, Ալավերդի՝ 14, Ստեփանավան՝ 26, Տաշիր՝ 18):
 - ✓ Աշխատանքի է տեղավորվել 48 մարդ (Վանաձոր՝ 11, Ալավերդի՝ 7, Ստեփանավան՝ 17, Տաշիր՝ 13):
- **Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը.** Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր՝ (ՀՀ ՊՆ-ից զոհված կամ զինհաշմանդամ զինծառայողների ընտանիքների բնակապահովման ծրագրից 2013թ. օգտվել են 5 զոհվածի և 1 զինհաշմանդամի ընտանիքներ (ընդհանուր գումարը՝ 20.451.000 դրամ):

- **ՄԶԾ առաջարկված տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների** լուծմանն ուղղված
 - ✓ քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցման (մեր կողմից ճշտվել են կառուցման վայրերը և քաղաքային համայնքները պատրաստ են իրենց մասով ներդրումներ կատարել), բնակչությանը սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ու սոցիալապես խոցելի խմբերի կարիքների գնահատմանն ուղղված միջոցառումների իրագործման համար: Առաջարկված ծրագրով ֆինանսավորում չի կատարվել: Այսօր առկա է հետևյալ պատկերը՝ քաղաքային համայնքների մշակութային և սպորտային 68 կենտրոններում (որից՝ սպորտային՝ 18 և մշակութային՝ 51) կառուցվել է ընդամենը 2 թեքահարթակ:
 - ✓ ՄԶԾ մյուս ծրագրերի կատարման համար (Սպիտակում տարեցների կենտրոնի հիմնում, Վանաձորում՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական և պրոթեզաօրոպեդիկ պարագաների վերանորոգման մարզային ծառայության ստեղծում) համայնքները պատրաստակամ են, նպատակային միջոցներ չեն հատկացվել: Իսկ Ալավերդի քաղաքում՝ տարեցների ցերեկային կենտրոնի ստեղծումը քաղաքապետարանը հրատապ անհրաժեշտություն չի համարել:
 - ✓ Զգալի և նպատակամղված աշխատանքներ են իրականացվել որպես ոլորտային նպատակ ընտրված՝ Լոռու մարզում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացման ուղղությամբ: Անապահովության գնահատման համակարգում 01.01.2014թ. դրությամբ նպաստառու ընտանիքների ամսական միջին թիվը կազմում է 18 994 ընտանիք:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Գյուղատնտեսություն

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. գյուղատնտեսության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **3,690,000.0** հազ. դրամ: Ֆինանսական բոլոր աղբյուրների հաշվին փաստացի պլանավորվել է կատարել **267,439.3** հազ. դրամ ծավալով աշխատանքներ՝ այդ թվում **10.000.0** հազ. դրամը պետբյուջից՝ հրատապ աշխատանքների ծրագրով, **250,000.0** հազ. դրամը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ մարզում իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրի միջոցներից և **7,439.3** հազ. դրամը՝ համայնքային բյուջեների միջոցներից:

2013թ. մարզում իրականացվել է **194.302** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. ՀՀ պետբյուջեից՝ **40.807** մլն դրամ, որից 9,166 մլն դրամը հրատապ ծրագրով, համայնքային բյուջեներից՝ 3.495 մլն դրամ և 150.0 մլն դրամ մասնավոր ներդրողների միջոցներից:

2013թ. ընթացքում կատարվել են գյուղատնտեսական նշանակության հետևյալ շինարարական աշխատանքները.

- Վերանորոգվել է Խնկոյան համայնքի ոռոգման ջրամբարը: Աշխատանքների իրականացման համար պետական բյուջեից կատարվել է 9,167.0 հազար դրամ ներդրում համաձայն ՀՀ կառավարության 07.02.2013թ. N 130-Ն որոշման 5-րդ հավելվածի 2.29 կետի:
- Կատարվել է Ձորագյուղ համայնքի վարչական տարածքի «Ուռուտ» կոչվող տարածքով հոսող Ձորագետ գետի հունի ուղղման, աջ ափի ամրացման և ափապաշտպան հենապատի կառուցման աշխատանքները: Շինարարական աշխատանքների

իրականացման համար պետական բյուջեի պահուստային ֆոնդից կատարվել է 31.641.231,0 դրամի ներդրում:

Լոռու մարզում 2011-2015թթ. իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրի շրջանակներում, 2013թ-ի է շուրջ 150.0 մլն դրամ ծավալի տեխնիկական միջոցների տրամադրման և շինարարական աշխատանքներ են կատարվել: Տեխնիկական միջոցներ են տրամադրվել. Ահնիձոր, Մարց և Քարինջ համայնքներին մեկական հատ՝ հակավորող մեքենա, հնձիչ, փոցխ և ձեռքի հնձիչ, Դսեղ համայնքին՝ հակավորող մեքենա, հնձիչ, փոցխ, Լորուտ համայնքին՝ փոցխ և հնձիչ:

Մարզի Հաղպատ, Լեռնանցք, Սվերդլով, Դսեղ, Կուրթան, Մարգահովիտ, Ազնվաձոր և Շնող համայնքները պահանջարկ են ներկայացրել գյուղատնտեսական տեխնիկա և գործիքներ ձեռք բերելու համար, որոնց հիման վրա համապատասխան գրություններ է ուղարկվել ՀՀ տարածքային կառավարման և գյուղատնտեսության նախարարություններ:

Գյուղատնտեսության ոլորտում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները

Աղյուսակ 3.1.1

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2013թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.01.14թ	այդ թվում հրատապ 4-րդ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	267.44	194.302	9.166	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	10.00	40.807	9.166	
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	10.00			
1	Խնկոյանի ոռոգման ջրամբարի վերանորոգում (Հրատապ ծրագրով)	10.00	9.17	9.166	
2	Ձորագետ գետի հունի ուղղման, աջ ափի ամրացման և ափապաշտպան հենապատի կառուցման աշխատանքներ: (Պահուստային ֆոնդից)		31.64		
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	7.4393	3.495		
1	Ղուրսալի համայնքում գյուղտեխնիկայի ձեռքբերում	4.94			
2	Օձուն համայնքում գյուղտեխնիկայի ձեռքբերում	2.50	3.495		
III	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ	250.00	150.00		
	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրի Արոտների կառավարում և անասնապահության զարգացում	250.00	150.00		

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտը ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՄԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական

ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:

Լոռու մարզի զարգացման ծրագրում առաջնային թիրախներ են.

- ✓ սերմնաբուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմարտադրության համար
- ✓ բանջարեղենի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնում
- ✓ կարտոֆիլի, բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում
- ✓ կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնում:

Կարևորվում է նաև գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: Այն ներառում է սառնարանային և վերամշակող տնտեսությունների, փոքր սպանդանոցների, կաթի ընդունման և վերամշակման կետերի հիմնում, համայնքի ոռոգման համակարգերի վերականգնում և այլն: Սրանց մի մասը նախատեսվում է ֆինանսավորվել պետական բյուջեի կողմից, իսկ մյուս մասը պետք է լինի մասնավոր նախաձեռնությունների արդյունք:

«Անասնաբուծասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային ստորաբաժանման ներկայացուցիչների հետ մշտական ուշադրության և հսկողության տակ է պահվել թունաքիմիկատների, կենսապատրաստուկների վաճառքի և պահպանման պայմանների, բույսերի մշակության ագրոտեխնիկական կանոնների պահպանման ու կիրառման, սերմերի և տնկանյութերի ցանքային պիտանելիության և որակի պահպանման աշխատանքների կազմակերպումը:

«Անասնաբուծասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային ստորաբաժանման ներկայացուցիչների հետ կատարվել են բույսերի կարանտին հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման համար ուսումնասիրություններ:

2013թ. ընթացքում գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից գարնանը մարզին հատկացվել է

- 2545.0 տ ազոտական պարարտանյութ, որը բաշխվել է մարզի 66 համայնքների
- 933.328 լիտր դիզելային վառելանյութ՝ բաշխվել է 84 համայնքների:

Աշնանը հատկացվել է

- 1000,0 տ ազոտական պարարտանյութ՝ բաշխվել է 42 համայնքների
- 510.181 լիտր դիզելային վառելանյութ՝ բաշխվել է 50 համայնքների:

«2010-2014թթ. ՀՀ-ում հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրի» շրջանակներում մարզին հատկացվել է.

- 2013թ. գարնանացանի համար.
 - 50,0 տոննա գարնանացան գարու սերմացու՝ բաշխվել է 20 համայնքների,
 - 5,0 տոննա առվույտի սերմացու՝ մաշխվել է 28 համայնքների,
 - 6,5 տոննա կորնզանի սերմացու՝ բաշխվել է 12 համայնքների
 - 4,0 տոննա եգիպտացորենի սերմացու՝ բաշխվել է 10 համայնքների:
- 2013թ. աշնանացանի համար.
 - 42,3 տոննա աշնանացան ցորենի էլիտային սերմացու, որը բաշխվել է 11 սերմարտադրող ֆերմերների,
 - 335,0 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու՝ բաշխվել է 46 համայնքների,

Լոռու մարզային փրկարարական վարչության մասնագետների հետ համատեղ ուսումնասիրվել է տարերային աղետներից առավել տուժած համայնքների ցանքերի վիճակը, կազմվել է

մասնագիտական ակտ պատճառված վնասների չափի վերաբերյալ և ներկայացվել մարզպետի հաստատմանը: 2013թ. ընթացքում կարկտահարվել է մարզի 3 համայնքների ցանքատարածություններ, վնասվել է 548 հա ցանքատարածություն: Վնասի չափը կազմել է 227,08 մլն դրամ:

«Տաշիր» հիմնադրամի կողմից կարկտահարությունից առավել տուժած Ամրակից, Լեջան և Ագարակ համայնքներին տրամադրվել է 42.5 տոննա ազոտական պարարտանյութ:

Լոռու մարզային վիճակագրական գործակալության հետ ամփոփվել են զարնանացանի և բերքահավաքի տվյալները, որը սահմանված կարգով ներկայացվել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումները կազմակերպելու համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին հատկացվել է զարնանը 868,44 կգ, իսկ աշնանը՝ 823,68 կգ (ընդամենը 1692,12 կգ) ցինկի ֆոսֆիդ, որը բաշխվել է գյուղնախարարության կողմից անցկացված մոնիտորինգի հիման վրա հաստատված 68 համայնքների: Պայքարի միջոցառումները իրականացվել է 14101,0 հա-ի վրա:

- 2012թ. հունիս ամսին ֆրանսիայի MRE-ի (Անասնաբուծության շրջանային տուն) կողմից Լոռու մարզում կատարած փորձագիտական այցի և Լոռու մարզպետի 2013թ. հունիս ամսին Պրովանս Ալպ Կոտ դ'Ազուր այցելություն արդյունքում կազմվեց «Լոռու մարզում անասնաբուծության զարգացման համագործակցություն» ծրագիրը: Այս ծրագրի նպատակն է ֆրանսիայի ՊԱԿԱ շրջանի Կարմեժանի լիցեյի ոչխարաբուծական ֆերմայի օրինակով Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում հիմնել տնտեսություն՝ մսատու ոչխարաբուծությունը զարգացնելու, անասնապահների մասնագիտական գիտելիքները կատարելագործելու և այն արտադրության մեջ ներ դնելու նպատակով: 2013թ.-ին այդ ծրագրի իրականացման համար նախապատրաստական աշխատանքներ են կատարվել, մարզի անասնաբուծության գծով 4 մասնագետների 2014թ. մարտ ամսին Ֆրանսիա գործուղելու համար՝ ոչխարաբուծության բնագավառում Ֆրանսիական փորձը ուսումնասիրելու նպատակով:

3.2. Բնապահպանություն

Մարզի բնապահպանության ոլորտում 2013թ. ՏԱՊ-ով բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսվել է **245.73** մլն դրամ, որից **12.00** մլն դրամը պետական բյուջեից՝ հրատապ ծրագրով, **233.73** մլն դրամ՝ համայնքային բյուջեներից:

2013թ. իրականացվել է **245.644** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում **10.82** մլն դրամը պետական բյուջեից՝ հրատապ ծրագրով և **234.824** մլն դրամը համայնքային բյուջեներից:

Բնապահպանության ոլորտում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները

Աղյուսակ 3.2.1

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2013թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.01.14թ (մլն դրամ)	այդ թվում հրատապ 4- րդ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	245.732	245.644	10.820	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	12.000	10.820	10.820	
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	12.000	10.820	10.820	
	Վահագնիի հեղեղատարի կառուցում	12.00	10.82	10.82	
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	233.732	234.824		
1	Վանաձոր քաղաքում աղբարկղների ձեռքբերում և տեղադրում, կեղտաջրերի հեռացում	5.760	9.965		
2	ք. Ալավերդում բնապահպանական ծրագրերի իրականացում	75.320	73.637		
3	ք. Ախթալայում բնապահպանական ծրագրերի իրականացում	3.500	2.450		
4	Գուգարք գյուղում աղբարկղների տեղադրում և սելավատարների մաքրում	1.330	3.600		
5	Դարպաս համայնքի սելավատարի նորոգում	5.632	3.600		
6	Աքրորի համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	27.050	26.861		
7	Հազվի համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	44.040	44.035		
8	Հաղպատ համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	17.500	17.076		
9	Օձուն համայնքում բնապահպանական ծրագրերի իրականացում	53.600	53.600		

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով 2013թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- 2013թ. «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում իրականացրել է.
 - ✓ Սպիտակ, Կաթնաջուր, Արջուտ, Ֆիոլետովո, Ծաղկաբեր, Ջրաշեն, Ղուսալի, Սվերդլով և Կողես համայնքներում շուրջ 416 հա տարածքի վրա նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ,

- ✓ Ծաղկաբեր և Ղուրսալի համայնքներում շուրջ 3 կմ ցանկապատի վերանորոգում,
- ✓ Կողես համայնքում 5 հա անտառտնկում և սերմերով 27 860 հատ կաղնու ցանքս,
- ✓ Ծաղկաբեր համայնքում 171.8 հա-ի վրա իրականացվել են լրացման աշխատանքներ:

Անտառտնկարկների խնամքի և լրացման աշխատանքներն կրում են շարունակական բնույթ:

Ավանդական դարձած անտառտնկման աշխատանքներից բացի, հիմնադրամը մարզում իրականացնում է նաև տարաբնույթ բնապահպանական ուսուցողական դասընթացներ, անվճար հիմունքներով համայնքներին է տրամադրում պտղատու և դեկորատիվ տնկիներ:

- Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրով նախատեսված է մինչև 2020թ. հատել 158.1հա անտառ, իսկ մնացած 198.9հա-ը՝ 2020թ. և հետագա տարիներին: Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված, ըստ հաստատված բնապահպանական ծրագրի, «Թեղուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել 714 հա անտառտնկման աշխատանքներ, որից 2009-12թթ. ընթացքում մասնագիտացված ձեռնարկությունների միջոցով արդեն իսկ 220 հա համայնքային (73 հա՝ Լեռնահովիտ, 50 հա՝ Թեղուտ, 50 հա՝ Արջուտ, 30 հա՝ Օձուն, 17 հա՝ Շնող) և 80 հա անտառային ֆոնդի տարածքների վրա կատարվել են անտառտնկման, ցանկապատման և խնամքի աշխատանքներ: 2013թ. նույն ծրագրի շրջանակներում «Գուգարքի անտառտնտեսություն» և «Լավվարի անտառտնտեսություն» մասնաճյուղերի տարածքներում իրականացվել է շուրջ 78.5 հա տարածքի անտառտնկում և նախորդ տարիներին տնկված անտառմշակույթների լրացում 114.1 հա:
- «Գուգարքի անտառտնտեսություն» և «Տաշիրի անտառտնտեսություն» մասնաճյուղերի 200 հա տարածքում իրականացվել է նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացման աշխատանքներ:
- WWF ծրագրով.
 - «Թռչկան» ջրվեժի՝ բնության հուշարձանի հարևանությամբ, 20հա տարածքի վրա իրականացվել են ցանկապատման և անտառպատման աշխատանքներ: 2014-15թթ. կիրականացվի տնկված անտառային մշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ:
 - «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի 59.8 հա տարածքում իրականացվել և անտառտնկում, իսկ աշնանը լրացման աշխատանքներ:
- Գործող օրենքի համաձայն Ալավերդու պղնձաձուլական գործարանի և Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի կողմից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին պետական բյուջեից կատարվում են մասնահանումներ՝ բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար: Ստորև բերված է ՀՀ պետական բյուջեի կողմից 2009-2013թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար տրամադրված գումարների վերաբերյալ տեղեկատվություն.

հազ. դրամ

Համայնքներ	Տարիները				
	2009	2010	2011	2012	2013
Ալավերդի	103,564.2	37,292.2	55,155.9	94,411.5	110,000.0
Հաղպատ	9,197.3	9,197.3	18,600.0	23,602.8	25,000.0
Օձուն	8,992.8	9,006.0	18,600.0	23,602.9	58,664.8
Աքորի	18,470.5	18,994.2	11,712.0	23,602.8	28,000.0
Հազվի			800.0	8,000.0	50,000.0
Ախթալա		2,540.0	1,000.0	1,500.0	3,500.0
Ընդամենը	140,224.8	77,029.7	113,067.9	174,720.0	275,164.8

- Մարզպետարանի բնապահպանության բաժնի մասնագետները պարբերաբար կատարել են ուսումնասիրություններ արդյունաբերական թափոններ առաջացնող ձեռնարկություններում և ցուցաբերում են աջակցություն առկա խնդիրների լուծման ուղղությամբ: Մասնավորապես Լոռու մարզպետարանի, «Թափոնների կառավարում» տարածաշրջանային ծրագրի և այլ շահագրգիռ կառույցների համագործակցությամբ:

- ✓ Ռեկուլտիվացվել և ծառատունկ է կատարվել Ախթալայի ԼՀԿ-ի «Նազիկ» պոչամբարի 1 հա վրա: 2013թ. անցկացված մոնիտորինգի արդյունքները փաստել են ծառերի և թփերի 95%-անոց կաջողականություն:

- ✓ Ռեկուլտիվացվել և կանաչապատվել է Ալավերդու նախկին, ավիամերձ աղբավայրը՝ 2 հա: Ռեկուլտիվացված տարածքը այլևս որպես աղբավայր չի ծառայում, իսկ կանաչապատումը տվել է իր դրական արդյունքները:

- ✓ Ընթացքի մեջ է մարզում առկա պոչամբարների գույքագրման գործընթացը, որի արդյունքում կկատարվի նրանցից առաջացող հնարավոր բնապահպանական ու առողջապահական ռիսկերի գնահատում, որտեղ կտրվեն նաև տվյալ ռիսկերի վերացմանն ու մեղմացմանն ուղղված համապատասխան առաջարկություններ:

- Հայ-Գերմանական Ֆինանսական Համագործակցության շրջանակներում իրականացվում է «Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ, ք. Վանաձոր» ծրագիրը: Ծրագրի փորձագետների կողմից նոր աղբավայր կառուցելու համար հավանության է արժանացել Քարաձոր համայնքի հարակից տարածքը: Նոր եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայրի կառուցման դեպքում, ծրագիրը ենթադրում էր, որ աղբավայրից կօգտվեն ոչ միայն Վանաձոր և Սպիտակ քաղաքները, այլև Գուգարքի և Սպիտակի տարածաշրջանի գրեթե բոլոր գյուղական համայնքները: Ներկայումս ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ծրագրին առաջարկվել է դիտարկել ոչ միայն վերը նշված տարածաշրջանները, այլ ամբողջ մարզը և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքը: Նոր աղբավայրը կլուծի նաև համայնքներում տարերայնորեն առաջացած ապօրինի աղբավայրերի լիկվիդացման հարցը:

- Մարզպետարանի կողմից տարվող հետևողական աշխատանքի շնորհիվ, մարզի մի քանի գյուղական համայնքներ ևս ձեռք են բերել աղբարկղներ և սկսել են կատարել կանոնակարգված աղբահանության աշխատանքներ:

- Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ մշակվում և պարբերաբար անց են կացվում «Անտառների հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնավարժություններ: Ըստ ՀՀ Լոռու մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցի՝ Լոռու մարզի ԱԻ հանձնաժողովի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, շահագրգիռ կազմակերպությունների և համայնքների մասնագիտացված խմբերի ու արձագանքող ուժերի մասնակցությամբ անց է կացվել հրամանատարական շտաբային ուսումնավարժություն:

4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, քաղաքաշինության ոլորտում (բնակարանաշինություն և բնակարանային տնտեսություն ու բարեկարգում) 2013թ. մարզում նախատեսված էր իրականացնել **710.00** մլն դրամ ծավալով աշխատանքներ, սակայն 2013թ. պլանավորվել է **518.565** մլն դրամի, այդ թվում **426.26** մլն դրամը՝ պետբյուջեով, որից **346.23** մլն դրամը հրատապ աշխատանքների կատարման պլանով և **92.3054** մլն դրամը համայնքային բյուջեներով:

2013թ. իրականացվել է **1,975.816** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետական բյուջեից՝ **415.021** մլն դրամ, (**332.021** մլն դրամը՝ հրատապ ծրագրով), համայնքային բյուջեներից՝ **60.795** մլն դրամ և մասնավոր միջոցներից՝ **1,500.00** մլն դրամ:

ՀՀ Լոռու մարզում պետական բյուջեից և այլ միջոցներից քաղաքաշինության գծով 2013թ. հատկացումները և իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2013թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.01.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	518.5654	1,975.82	332.021	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	426.2600	415.021	332.021	
	ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	83.00	83.00		
1	Վանաձորում բնակելի շենքերի վերանորոգում (48 բնակարան)	50.00	50.00		
2	Ստեփանավանում բնակելի շենքերի տանիքների վերանորոգում	33.00	33.00		
	ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	343.26	332.021	332.021	
1	Ալավերդու բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	57.83	52.319	52.319	
2	ք. Ախթալայի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	21.72	20.749	20.749	
3	ք. Թումանյանի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	8.90	8.221	8.221	
4	Ձորագետավանի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	5.00	4.434	4.434	
5	ք. Վանաձորի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	76.28	70.607	70.607	
6	Ստեփանավան քաղաքի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգում	2.00	1.640	1.640	
7	Քարկոփ համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	8.00	7.660	7.660	
8	Տաշիր համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	30.00	28.200	28.200	
9	Շամլուղ համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	15.00	27.340	27.340	
10	Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում	96.18	90.351	90.351	
11	Օձուն համայնքի փողոցների լուսավորության համակարգերի կառուցում	15.00	12.650	12.650	
12	Նախագծահետազոտական ծախսեր	7.35	7.850	7.850	
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	92.305	60.795	0.000	
1	Վանաձոր քաղաքի բազմաբնակարան շենքերի նորոգում	19.600	9.0546		
2	Վանաձոր քաղաքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում	20.000	28.495		
3	Ստեփանավան քաղաքի փողոցային լուսավորության ցանցի նորոգում	3.000	3.000		
4	Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի նորոգում	17.000	0.280		
5	Տաշիր քաղաքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում	5.000	0.000		

6	Լեռնապատ համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում	1.500	0.000		
7	Ամրակից համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում	0.807	0.000		
8	Թեղուտ համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում	0.500	0.000		
9	Հազվի համայնքի փողոցային լուսավորության համակարգի նորոգում	0.389	0.096		
10	Հաղպատ համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում	1.000	1.000		
11	Ձորամուտ համայնքի փողոցային լուսավորության համակարգի նորոգում	0.300	0.101		
12	Մեղովկա համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում	1.000	0.000		
13	Նորաշեն համայնքի փողոցային լուսավորության համակարգի ընդլայնում	0.500	0.340		
14	Արևաշող համայնքի փողոցային լուսավորության համակարգի ընդլայնում	1.000	1.000		
15	Լեռնանցք համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում	3.000	0.000		
16	Ծաղկաբեր համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում	4.410	0.000		
17	Կաթնաջուր համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում	4.800	4.769		
18	Ջրաշեն համայնքի փողոցային լուսավորության համակարգի ընդլայնում	8.000	3.300		
19	Սարահարթ համայնքի փողոցային լուսավորության համակարգի նորոգում	0.500	0.000		
20	Գուգարքի փողոցային լուսավորության համակարգի ընդլայնում		0.3997		
21	Բազումի փողոցային լուսավորության համակարգի ընդլայնում		1.000		
22	Մարգահովտի փողոցային լուսավորության համակարգի ընդլայնում		6.489		
23	Սպիտակի փողոցային լուսավորության համակարգի ընդլայնում		1.470		
	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ		1,500.0		
1	Բնակարանների, առանձնատների շինարարություն (վերանորոգում)		300.0		
2	Կենցաղային ծառայությունների օբյեկտների շինարարություն (վերանորոգում)		1,200.0		

4.1 2013թ. ՀՀ պետական բյուջեի 415.021 մլն դրամով Լոռու մարզի քաղաքաշինության ոլորտում իրականացվել է ` 50.0 մլն դրամի բնակարանաշինական աշխատանքներ** (Վանաձորում բնակելի շենքերի վերանորոգում (48 բնակարան)) և 365,21մլն դրամի **բնակարանային տնտեսության և բարեկարգման, այլ աշխատանքներ, այդ թվում`

- ✓ **Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում`**
Ալավերդի, Ախթալա, Թումանյան, Վանաձոր, Տաշիր, Ստեփանավան և, Շամլուղ քաղաքային համայնքներում
- ✓ **Փողոցների լուսավորության ցանցի վերանորոգում`**
Ստեփանավան և Օձունի համայնքներում
- ✓ **Բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում** Վանաձոր քաղաքում

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

5.1. Ճանապարհաշինություն

Մարզի ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 932.9 կմ, այդ թվում՝ միջպետական ա/ճ - 218.9 կմ, հանրապետական ա/ճ - 490.9 կմ, մարզային ա/ճ - 223.1 կմ:

Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ – 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ – 5 հատ

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. ճանապարհաշինության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **2,035.00 մլն** դրամ է, սակայն բոլոր աղբյուրներով ճշգրտված պլանով նախատեսվել է կատարել **456.82 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **284.097 մլն-ը՝ ՀՀ** պետբյուջեի միջոցներով (**142.83 մլն** դրամը հրատապ աշխատանքների պլանով) և **172.724 մլն-ը՝** համայնքային բյուջեների միջոցներով:

2013թ. մարզի ճանապարհաշինական ոլորտում իրականացվել է **600.610 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում պետական բյուջեից՝ **567.022 մլն** դրամի, որից հրատապ աշխատանքների IV փուլի ծրագրով՝ **125.746 մլն** դրամի: Համայնքային ֆոնդային բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվել է **33.588 մլն** դրամ ծավալով փողոցների ասֆալտապատման ու վերանորոգման աշխատանքներ:

ՀՀ Լոռու մարզում պետական բյուջեից և այլ միջոցներից ճանապարհաշինության գծով 2013թ. հատկացումները և իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2013թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.01.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	456.821	600.610	125.746	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	284.097	567.022	125.746	
	ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	73.266	73.266		
	Միջպետական նշանակության ա/ճան.	19.670	19.670		
1	Ա/ճ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման Վանաձորի Նարեկացի փողոցի հիմնանորոգում (Մ6 - ճանապարհի ջրահեռացման կարգավորում)	19.670	19.670		
	Հանրապետական նշանակության ա/ճան.	53.596	53.596		
1	Հ-24 Գյուլագարակ-Թումանյան կայարան Մ-6 ա/ճանապարհի Կուրթան համայնքի տարածքում գտնվող 2 կամուրջների հիմնանորոգում	17.257	17.257		
2	Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման Գարգար գյուղի կամրջի կարգավորիչ պատերի հիմնանորոգում	27.339	27.339		
3	Ա/ճ Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման կմ 32+240 կամուրջի հիմնանորոգում	9.000	9.000		
	Մարզային նշանակության ա/ճան.	0.000	300.000		
1	Վանաձոր համայնքի ճանապարհների վերանորոգում		300.00		
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	210.831	193.756	125.746	

1	Մարզային ա/ճանապարհների պահպանում և շահագործում	68.001	68.001		
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	142.830	125.746	125.746	
1	ք. Վանաձորի փողոցների ասֆալտապատում	43.820	37.766	37.766	
2	ք. Սպիտակի փողոցների ասֆալտապատում	20.000	18.370	18.370	
3	ք. Ստեփանավանի փողոցների ասֆալտապատում	30.000	27.820	27.820	
4	Տաշիրի փողոցների ասֆալտապատում	20.010	15.380	15.380	
5	Լեջան համայնքի ճանապարհների վերանորոգում	17.000	15.490	15.490	
6	Ալավերդի համայնքի Թումանյան փողոցի գետափնյա հենապատի վերանորոգում	7.000	6.191	6.191	
7	Գուգարք համայնքի ճանապարհների վերանորոգում	5.000	4.730	4.730	
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	172.724	33.588	0.000	
1	Վանաձոր քաղաքի փողոցների ասֆալտապատում	109.000	15.950		
2	Ստեփանավան համայնքի ճանապարհների վերանորոգում	6.554			
3	Ալավերդում կանգառի վերանորոգում	0.800	1.989		
4	Շամլուղի փողոցների մասնակի նորոգում	1.000			
5	Գուգարք համայնքի ճանապարհների և կամրջի վերանորոգում	8.160	4.100		
6	Դեբետ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.870	0.200		
7	Շահումյան համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.888	1.157		
8	Քարաբերդ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	1.000			
9	Ֆիոլետովո համայնքի ճանապարհների նորոգում	6.088			
10	Կաթնաղբյուր համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	1.500	0.950		
11	Կուրթան համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	1.030			
12	Վարդաբլուր համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	1.772			
13	Այգեհատ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	1.026			
14	Թեղուտ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	3.520	1.500		
15	Ճոճկան համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.600			
16	Մեծ Այրում համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.500	0.400		
17	Նեղոց համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.400	0.400		
18	Շամուտ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.100	0.200		
19	Դաշտադեն համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.382			
20	Լեռնահովիտ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	2.340	0.300		
21	Կաթնառատ համայնքի ճանապարհների	0.500	0.300		

	մասնակի նորոգում				
22	Ձյունաշող համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.400	0.200		
23	Ձորամուտ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.830	0.360		
24	Մեղովկա համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.511			
25	Նովոսելցովո համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.310	0.200		
26	Պրիվոլնոյե համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	4.000			
27	Արևաշող համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	1.000	1.000		
28	Գեղասր համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.508			
29	Գոգարան համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	1.000	0.400		
30	Լեռնավան համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	1.000			
31	Լուսաղբյուր համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.600	0.570		
32	Ծաղկաբեր համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.500	0.300		
33	Կաթնաջուր համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	5.100	0.969		
34	Ղուրսալի համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.950			
35	Նոր Խաչակապ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.400	0.300		
36	Շենավան համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.611			
37	Շիրակամուտ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.494			
38	Ջրաշեն համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	5.118			
39	Սարահարթ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.500	1.000		
40	Սարամեջ համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.714	0.714		
41	Քարածոր համայնքի ճանապարհների մասնակի նորոգում	0.147	0.130		

5.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարումը մարզում իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունների միջոցով և տեղական ինքնկառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ:

Լոռու մարզի կարևոր հարստություններից են հանդիսանում խմելու համար պիտանի, բարձր որակի ջրի մեծ պաշարները, որը ներկա իրավիճակում գերազանցում են անհրաժեշտ պահանջարկը: Ջրամատակարարման համակարգը մարզի բնակչությանը և արդյունաբերությանը տարեկան տրամադրում է մոտ 17.1 մլն մ³ խմելու ջուր, որը սպառողին է հասցվում ինքնահոս

եղանակով և պոմպակայանների միջոցով: Մարզի ջրային ցանցի երկարությունը 3395.23 կմ է, ջրի ծախսը՝ 1250 լիտր/վրկ, որից ճնշումային՝ 520 լիտր/վրկ: Մարզի 7 քաղաքների և 56 գյուղերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը (Ջ և Ջ) կատարվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Հյուսիս արևելյան» տարածքային մասնաճյուղի և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցով: Մարզի մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչության ջրամատակարարման հարցում:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. ջրամատակարարման ոլորտի համար պահանջվող գումարը կազմում է **147.00 մլն** դրամ, փաստացի ՏԱԴ-ով պլանավորվել է կատարել **2,764.19 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **581.80 մլն-ը**՝ ՀՀ պետությունից միջոցներով (**72.00 մլն** դրամը՝ հրատապ աշխատանքների պլանով), **2,136.90 մլն-ը**՝ վարկային միջոցներով և **45.4871 մլն-ը**՝ համայնքային միջոցներով:

2013թ.-ին իրականացվել է **2,322.20 մլն** դրամի աշխատանք, այդ թվում՝ **1,733.90 մլն** դրամի՝ վարկային միջոցներով, **564.53 մլն** դրամի՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներով (**54.73 մլն** դրամը՝ հրատապ աշխատանքների պլանով) և **23.77 մլն** դրամի՝ համայնքային միջոցներով:

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Վանաձոր քաղաքի և 16 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավումն իրականացվում է գերմանական վերականգնման բանկի (KFW) և ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող (**509.80 մլն** դրամ) ծրագրով: 2013թ. իրականացվել է **2,039.20 մլն** դրամի աշխատանք, այդ թվում՝ **1,529.4 մլն** դրամը՝ վարկային միջոցներից և **509.80 մլն** դրամը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի աշխատանքների բարելավման նպատակով «Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկի» ծրագրով պլանավորված **607.50 մլն** դրամի աշխատանքներից **2013թ** իրականացվել է **204.50 մլն** դրամի աշխատանքներ:

Ջրամատակարարման ոլորտում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2013թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ		Ծանոթություն
			01.01.14թ. (մլն դրամ)	այդ թվում հրատապ ծրագրով	
	Ընդամենը մարզում՝	2,764.19	2,322.20	54.733	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	581.80	564.53	54.733	
	KFW-Գերմանական վարկային ծրագիր «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման բաշխիչ ցանցերի կառուցում (համաֆինանսավորում KFW)	509.80	509.80		
	ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	72.000	54.733	54.733	
1	Ալավերդի համայնքի Սանահին թաղամասի ջրամատակարարման ներքին ցանցի վերանորոգում	30.00	19.96	19.96	
2	Ջիլիգա համայնքի ջրամատակարարման համակարգի վերանորոգում	15.00	14.99	14.99	
3	Եղեգնուտ համայնքի ջրամատակարարման համակարգի վերանորոգում	27.00	14.63	14.63	

4	Արևաշող համայնքի խմելու ջրագծի քլորատան կառուցում		5.15	5.15	
	ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	2,136.90	1,733.90	0.00	
1	KFW-Գերմանական վարկային ծրագիր «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման բաշխիչ ցանցերի կառուցում	1,529.40	1,529.40		
2	«Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկի» ծրագրեր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում	607.50	204.50		
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	45.4871	23.77		
1	Ազնվածորի խմելու ջրագծի նորոգում	0.300	0.000		
2	Գուգարք համայնքի խմելու ջրհավաքի կառուցում	1.260	1.185		
3	Եղեգնուտ համայնքի ջրամատակարարման համակարգի վերանորոգում	1.925	0.000		
4	Կաթնաղբյուր համայնքի խմելու ջրագծի նորոգում	1.740	0.000		
5	Պուշկինո համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.845	0.000		
6	Ուռուտ համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.500	0.000		
7	Արդվի համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.200	0.537		
8	Թեղուտ համայնքի ջրամատակարարման ցանցի նորոգում	2.000	1.720		
9	Ծաղկաշատ համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.260	2.855		
10	Հաղպատ համայնքի խմելու ջրագծի նորոգում	1.000	0.883		
11	Մարց համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.156	0.000		
12	Նեղոց համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.280	0.280		
13	Շնող համայնքի ջրամատակարարման ցանցի նորոգում	2.612	2.503		
14	Լեռնահովիտ համայնքի ջրամատակարարման ցանցի նորոգում	1.800	0.750		
15	Կաթնառատ համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.300	0.300		
16	Ձյունաշող համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.200	0.200		
17	Մեղովկա համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.400	0.000		
18	Մեծավան համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.700	3.218		
19	Միխայելովկա համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.500	0.000		
20	Նորաշեն համայնքի խմելու ջրագծի նորոգում	1.000	1.000		
21	Պրիվոլնոյե համայնքի ջրամատակարարման ցանցի նորոգում	3.751	0.000		
22	Արևաշող համայնքի ջրամատակարարման ցանցի ընդլայնում	4.200	1.953		
23	Գոգարան համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.500	0.000		
24	Լեռնանցք համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.568	0.000		
25	Լեռնավան համայնքի խմելու ջրագծի նորոգում	1.200	0.000		
26	Լուսաղբյուր համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.520	0.953		
27	Ծաղկաբեր համայնքի խմելու ջրագծի նորոգում	1.000	1.600		
28	Հարթազյուղ համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.700	0.000		
29	Ղուրսալի համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.980	0.000		
30	Մեծ Պարնի համայնքի ջրամատակարարման ցանցի նորոգում	3.229	0.000		

31	Նոր խաչակապ համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.637	0.552		
32	Շիրակամուտ համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.326	0.000		
33	Զրաշեն համայնքի խմելու ջրամատակարարման ցանցի ընդլայնում	8.500	0.000		
34	Սարահարթ համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.598	0.000		
35	Սարամեջ համայնքի խմելու ջրագծի նորոգում	0.800	1.300		
36	Սարատովկա համայնքի խմելու ջրագծի նորոգում		0.156		
37	ք.Ախթալա համայնքի խմելու ջրագծի նորոգում		0.420		
38	Աթան համայնքի խմելու ջրագծի նորոգում		0.377		
39	Հազվի համայնքի խմելու ջրագծի նորոգում		0.090		
40	Մղարթ համայնքի խմելու ջրագծի նորոգում		0.136		
41	Վարդաբլուր համայնքի խմելու ջրագծի նորոգում		0.600		
42	Ուրասար համայնքի խմելու ջրագծի նորոգում		0.199		

5.3. Գազամատակարարում

Գազաֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Համայնքներում գերակա խնդիր է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը: Գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 10-12մ³ վառելափայտի խնայողություն, որն իր հերթին կնպաստի անտառահատումների, էկոլոգիայի և դրանից բխող պրոբլեմների լուծմանը: Ավելի էժան վառելիքի առկայությունը կարող է նպաստել սահմանամերձ համայնքների զարգացմանը, ինչը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն: «Հայրուսգազարդ»-ի ներդրումները բավարար չեն ապահովելու համար գազամատակարարումը նույնիսկ հիմնական գազատարին կից համայնքներում, քանի որ նման միացումները փոքր համայնքներին տնտեսապես ձեռնտու չեն:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2013թ. գազաֆիկացման ոլորտի համար պահանջվող գումարը կազմել է **887.08 մլն** դրամ, ՏԱՊ-ով փաստացի պլանավորվել է կատարել **205.535 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **47.00 մլն-ը՝ ՀՀ պետբյուջեի միջոցներից, 31.235 մլն-ը՝ համայնքների ֆոնդային բյուջեներից և 127.30 մլն դրամը՝ ՀՀ ԿԱ ԳՏՏԶ ԾԻԳ-ի միջոցներից: 2013 թվականին մարզի համայնքներում իրականացվել է **111.246 մլն** դրամի գազաֆիկացման աշխատանքներ, այդ թվում ՀՀ պետբյուջեի միջոցներից՝ **44.837 մլն** դրամ (հրատապ ծրագրով), համայնքների բյուջեներից՝ **5.295 մլն** դրամ և ՀՀ ԿԱ ԳՏՏԶ ԾԻԳ-ի միջոցներից՝ **52.80 մլն** դրամ (Շիրակամուտ գյուղում և Սպիտակի «Գր. Լուսավորիչ» թաղամասում), «Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագրի» միջոցներից՝ **8.00 մլն** դրամ (Եղեգնուտ համայնքում) և «Փարոս» հիմնադրամի միջոցներից՝ **0.314 մլն** դրամ (Վահագնաձորի «Առվակ» մանկապարտեզի գազաֆիկացում):**

Գազամատակարարման ոլորտում 2013 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

